ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/51

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
Բողոք բերող՝ «Ալմաքսիմս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական նշանակության ապրանքների և գործիքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 13.04.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերով պահանջվող անհիմն պահանջների վերացման համար կիրառել բոլոր քայլերը, այն է՝ «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» և պահանջել պատվիրատուից կատարելու փոփոխություն հրավերում՝ ապահովելով գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցություն:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 13.04.2020թ.-ին:

14.04.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 08.05.2020թ.-ին:

2. <u>«Ալմաքսիմս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն 13.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» հիմնադրամը բժշկական նշանակության ապրանքների և բժշկական գործիքների ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Գնման առարկա հանդիսացող բժշկական պարագաները խմբավորված են «59» չափաբաժիններում, որոնցից սույն բողոքի շրջանակներում Ձեր ուշադրությունն ենք հրավիրում 20,21, 22, 23, 24 չափաբաժինների վրա, որոնցով պատվիրատուն նախատեսում է գնել հետևյալ բժշկական պարագաները.

20	*Դեղապատ ստենտ/2*
21	*Դեղապատ ստենտ/3*
22	*Դեղապատ ստենտ/4*
23	*Դեղապատ ստենտ/5*

24	Դեղապատ սրտենտ/6

Սույն չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից ապրանքի տեխնիկական պահանջների մանրակրկիտ և օբյեկտիվ նկարագրությունից բացի ներառված է հետևյալ պահանջը

Մասնավորապես՝

<<Պարտադիր պայման է հանդիսանում Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայ ացուցչից երաշխիքային նամակ»:

Սույն պահանջը իրավական առումով հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և Գնումներ մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտմանը, և ուղիղ իմաստով դեմ է ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար սկզբունքներին մասնավորապես մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Ինչ վերաբերվում է «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջին, պատվիրատուի կողմից սահմանված պահանջը նախատեսված է ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526- Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով, բայց ունի կիրառման պարտադիր պայման, այն է՝ եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ըստ էության, պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերի տեխնիկական բնութագրի իրավաչափության համար, չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը հրավերի 20,21,22,23,24 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար և, անտեսելով կարգի պահանջը, ներառել է հրավերի տեխնիկական բնութագրերի մեջ:

Տվյալ դեպքում վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակի պահանջը արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից իրավական և բովանդակային առումով առնվազն անընդունելի ու անհասկանալի է գնման ենթակա ապրանքի վաճառքի ՀՀ-ում հատուկ սահմանափակումների բացակայության պայմաններում և ըստ էության հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, քանի որ այնպիսի պահանջվող փաստաթուղթը, որը կարող է տրվել բացառապես արտադրողից կամ նրա ներկայացուցչից, ուղղակիորեն սահմանափակում է հնարավոր այլ մասնակցի

մասնակցության հնարավորությունը, և դեմ է ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար հետևյալ սկզբունքներին՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այդպիսի հնարավոր մասնակից կարող է լինել օրինակ այնպիսի կազմակերպությունը, ով պատրաստ է առաջարկել հրավերով նշված ապրանքը պատվիրատուի կողմից առաջադրած բոլոր տեխնիկական պահանջներին համապատասխան, ներառյալ համապատասխանության սերտիֆիկատներ, անհրաժեշտության դեպքում իր կողմից ձեռք բերման փաստաթղթեր, իր և իր մատակարար կազմակերպության կողմից երաշխիքային նամակ ապրանքի պատվիրատուի պահանջած արտադրողի և ֆիրմային համապատասխանության մասին, բայց ձեռք բերելով վերավաճառող կազմակերպությունից, պահանջված երաշխիքային նամակը ներկայացնել ոչ թե արտադողից կամ ներկայացուցիչից, այլ իր և իր մատակարար/արտադրող կամ նրա ներկայացուցիչ չհանդիսացող/ կազմակերպությունից:

Խիստ կարևորելով նշյալ առարկաների առանձնահատկությունը ելնելով մարդու կյանքի և առողջության տեսակետից, գնման առարկայի բնութագրում պարտադիր և հատկապես առաջնային նշանակություն ունեն առարկայի որակի, ստանդարտի, անվտանգության և այլ օբյեկտիվորեն անհրաժեշտ տեխնիկական չափորոշիչները բնութագրող պահանջները, քանի որ ակնհայտորեն արտադրողից կամ նրա ներկայացուցիչից ներկայացրած նամակը դեռևս երաշխիք չի կարող լինել, որ մասնակիցը միշտ մատակարարում է հենց այն ապրանքախումբը, որը ձեռք է բերել երաշխավորական նամակի շրջանակներում հենց արտադրողից կամ նրա ներկայացուցչից:

Ոստի ներառված պահանջը ըստ էության հանգեցնում է Գնումներ մասին ՀՀ օրենքի 13-րդ հողվածի 2-րդ մասի հետևյալ դրույթների խախտմանը, ըստ որի Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Այսպիսով հաշվի առնելով վերոնշյալ իրավական փաստարկները, պատվիրատուի հրավերով սահմանված «ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակ»-ի պահանջը հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և ակնհայտորեն մրցակցության անհավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար:

Ինչ վերաբերվում է «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջին, ապա ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդմասի 21-րդ կետի 1-ի ա կետով նախատեսվում է պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ, եթե դրանք կիրառելի են թվյալ ապրանքի համար:

Ըսա էության պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների իրավաչափության համար չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը վեճի առարկա հանդիսացող առարկաների համար և անտեսելով կարգի պահանջը ներառել է հրավերի տեխնիկական պահանջի մեջ խախտելով ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով սահմանված դրույթը:

Ընդ որում մեր կողմից պարզաբանման նպատակով ներկայացվել է հարցում սույն դրույթի հիմնավորվածության վերաբերյալ, որը պատվիրատուի կողմից որևէ իրավական և փաստացի հիմնավորում սույն հրավերի 20,21,22,23,24, չափաբաժիններով նախատեսված ապրանքների պարագայում այդ դրույթի կիրառելի լինելու փաստարկի վերաբերյալ չի տրվել:

Ըստ էության հրավերի 20,21,22,23,24, չափաբաժիններով նախատեսված ապրանքների պարագայում տեխնիկական բնութագրերում պահանջվող «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ը ակնհայտորեն սահմանափակում է այն հնարավոր կազմակերպության մասնակցությունը գնման գործընթացին, ով, ինչպես վերը նշեցինք,

կարող է ներկայացնել պատվիրատուի տեխնիկական պահանջներին ամբողջությամբ բավարարող նույն ֆիրմային արտադրանք հանդիսացող ապրանք նույն արտադրողից, բայց ձեռք բերած այլ վերավաճառողից և կից ներկայացնի երաշխիքային նամակ, որը սակայն պատվիրատուի կողմից համարվի անհամապատասխան հրավերի պահանջներին: Այս պարագայում ևս պատվիրատուի պահանջը հանգեցնում է ՀՀ Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտման:

Այսպիսով հաշվի առնելով վերոնյալ իրավական փաստարկները, պատվիրատուի հրավերով սահմանված «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջը ևս հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և ակնհայտորեն մրցակցության անհավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար: Ելնելով Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի դրույթներից, հրավերի շրջանակներում սույն հարցադրումներով պատվիրատուից պահանջել ենք հրավերի պարզաբանում, սակայն տրամադրված պարզաբանման պատասխանը չի տվել բարձրացված հարցերի իրավական տեսակետից սպառիչ պատասխան և հրավերում չի կատարվել փոփոխություն:

Ներկայացնենք նաև բողոքի հետ անմիջականորեն առնչվող հետևյալ նկատառումները.

Նկատառում 1.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված <<ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման հրավերի բոլոր 59 չափաբաժիններով նշված ապրանքները ըստ էության ընդհանուր առմամբ համարվում են համանման ապրանքներ մարդու կյանքի և առողջության պահպանման տեսակետից և առնվազն տարօրինակ է միայն 20,21,22,23,24 չափաբաժինների համար սահմանել նմանօրինակ պահանջ, իսկ առավել տարակուսանք է առաջացնում այն փաստը, որ պատվիրատուի կողմից հրավերում սահմանված է հայտի ապահովման պահանջ երաշխիքի տեսքով հավելված 3, բացառապես 22,23,24 չափաբաժինների համար:

Նկատառում 2.

Նույն դեղապատ ստենտերի ձեռք բերման նպատակով պետական բժշկական հաստատությունների կողմից բազմիցս կազմակերպվել են մրցույթներ և կնքվել են

պայմանագրեր առանց վերը նշված պահանջի: Ընդ որում 2020թ,-ի մարտի 16-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ևս հայտարարվել է մեկ այլ «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» ծածկագրով բժշկական գործիքների և պարագաների, այդ թվում նաև դեղապատ ստենտերի ձեռք բերման նպատակով մրցույթի հրավեր, որի տեխնիկական բնութագրերում ներառված չէր վերը նշված պահանջները և կնքվել է մեր կազմակերպության հետ դեղապատ ստենտերի մատակարարման պայմանագիր:

Ամփոփելով բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և մեր կողմից կատարված դիտարկումները՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 20,21,22,23,24 չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերում «Պարտադիր պայման է հանդիսանում Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» պահանջը համարում ենք չհիմնավորված խոչընդոտող հանգամանք, որը կհանգեցնի ոչ միայն պետական գնումների հիմնարար սկզբունքների և տրամաբանության, Գնումների մասին ՀՀ օրենքի վերը նշված դրույթների խախտմանը, այլ նաև կխոչընդոտի տնտեսական ազատ մրցակցության և հակամենաշնորհային ՀՀ Կառավարության որդեգրած պետական քաղաքականությանը:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ և 24-րդ չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերով պահանջվող անհիմն պահանջների վերացման համար կիրառել բոլոր քայլերը, այն է՝ «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» և պահանջել պատվիրատուից կատարելու փոփոխություն

հրավերում՝ ապահովելով գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողմնակալ մասնակցություն:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն 29.04.2020թ.-ի թիվ Ե/գ 37-2020/04 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «ԱԼՄԱՔՍԻՄՍ ՍՊԸ»-ի կողմից 13.04.2020թ-ի ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի դիրքորոշման մասին մեր կարծիքը:

Ըստ էության պատվիրատուն, ինչպես պարզաբանման հարցմանն ի պատասխան, այնպես էլ սույն դիրքորոշման մեջ բովանդակային և իրավական որևէ հստակեցում չի մտցրել բարձրացված հարցերի մասով, չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում հրավերով սահմանված այն պահանջների վերաբերյալ, որոնք անհիմն են և հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և Գնումներ մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտմանը, և ուղիղ իմաստով դեմ են ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար սկզբունքներին մասնավորապես մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Մասնավորապես՝ «ԳՃԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՃ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 20, 21, 22, 23, 24 չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից ապրանքի տեխնիկական պահանջների մանրակրկիտ և օբյեկտիվ նկարագրությունից բացի ներառված է հետևյալ պահանջը՝

«Պարտադիր պայման է հանդիսանում՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույտվությունը հավաս տող ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»:

Սույն պահանջի անհիմն և հակամրցակցային լինելու բողոքով ներկայացված մեր փաստարկներին ի պատասխանպատվիրատուն դիրքորոշմամբ չի հիմնավորել հետևյալ հարցերը.

1. Չի տրվել իրավական հիմնավորում, առ այն, որ ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով սահմանված նորմի մասնավորապես «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջը հրավերի 20,21,22,23,24

չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար կիրառելի է: Ըստ էության պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների իրավաչափության համար՝ չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը վեճի առարկա հանդիսացող առարկաների համար և սույն դիրքորոշմամբ ևս չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում:

2 Չի տրվել իրավական և բովանդակային հիմնավորում գնման ենթակա ապրանքի վաճառքի ՀՀ-ում հատուկ սահմանափակումների բացակայության պայմաններում վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակի պահանջը բացառապես արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից լինելու հանգամանքի վերաբերյալ:

Քանի որ, ինչպես նշել ենք բողոքում հնարավոր մասնակից կարող է լինել օրինակ այնպիսի կազմակերպությունը, ով պատրաստ է առաջարկել հրավերով նշված ապրանքը պատվիրատուի կողմից առաջադրած բոլոր տեխնիկական պահանջներին համապատասխան, ներառյալ համապատասխանության սերտիֆիկատներ, անհրաժեշտության դեպքում իր կողմից ձեռք բերման փաստաթղթեր, իր և իր մատակարար կազմակերպության կողմից երաշխիքային նամակ ապրանքի պատվիրատուի պահանջած արտադրողի և ֆիրմային համապատասխանության մասին, բայց ձեռք բերելով վերավաճառող կազմակերպությունից, պահանջված երաշխիքային նամակը ներկայացնել ոչ թե արտադողից կամ ներկայացուցիչից, այլ իր և իր մատակարար/արտադրող կամ նրա ներկայացուցիչ չհանդիսացող/ կազմակերպությունից:

Եվ խիստ կարևորելով նշյալ առարկաների առանձնահատկությունը՝ ելնելով մարդու կյանքի և առողջության տեսակետից, գնման առարկայի բնութագրում պարտադիր և հատկապես առաջնային նշանակություն ունեն առարկայի որակի, ստանդարտի, անվտանգության և այլ օբյեկտիվորեն անհրաժեշտ տեխնիկական չափորոշիչները բնութագրող պահանջները, քանի որ ակնհայտորեն արտադրողից կամ նրա ներկայացուցիչից ներկայացրած նամակը դեռևս երաշխիք չի կարող լինել, որ մասնակիցը միշտ մատակարարում է հենց այն ապրանքախումբը, որը ձեռք է բերել երաշխավորական նամակի շրջանակներում ՝ հենց արտադրողից կամ նրա ներկայացուցչից:

Ուստի սույն պահանջը պատվիրատուի կողմից ևս հիմնավորված չէ և հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և ակնհայտորեն մրցակցության անհավասար պայմաններ է ստեղծում հնարավոր մասնակիցների համար: Ինչ վերաբերվում է պատվիրատուի կողմից դիրքորոշման հետ ներկայացված սույն մրցույթով մասնակիցների ավտորիզացիոն նամակներին, պետք է նշել, որ կարող է

թյուրըմբռնում առաջանալ, որ կան մի շարք կազմակերպություններ, որոնք ներկայացնում են պահանջված նամակը արտադողից կամ ներկայացուցիչից, սակայն դա այդպես չէ, քանի որ մրցույթի վերոհիշյալ չափաբաժիններով հայտ ներկայացրած մասնակիցները իրենց ներկայացրած երաշխիքային նամակներով արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից մասնակցում են յուրաքանչյուրը չափաբաժիններից մեկին, այլ կերպ ասած հանդիսանում են տվյալ չափաբաժնով ապրանքի ներկայացուցիչ և մասնակցում են տվյալ չափաբաժնի մասով, և այդ մասին են վկայում ոչ միայն այս մրցույթի, այլ նաև համանման մրցույթներում միշտ միևնույն ընկերությունների հայտերը և կնքած պայմանագրերը ըստ խիստ որոշակի ապրանքների՝ ՀՀ-ում համանման ապրանքների մի շարք ներմուծող կազմակերպությունների պարագայում:

Հատուկ ուշադրություն եմ ուզում դարձնել այն հանգամանքին որ ընդամենը 2020թ.-ի փետրվարի 10-ին /պայմանագրի կնքման ամսաթիվ 16.03.2020թ./ համանման ապրանքների ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթի ժամանակ տեխնիկական բնութագրում սուն պահանջը չներառված լինելու փաստին և ընդամենը կարճ ժամանակահատվածի տարբերությամբ նույն ստենտերի համար բողոքի առարկա դարձած պահանջը սահմանելուն ի պատասխան՝ պատվիրատուն հիմնավորում է սրտի վիրահատության ժամանակ արձանագրված անդառնալի հետևանքների փաստով:

Հարց է ծագում արդյոք պատվիրատուն հստակ կարող է ներկայացնել իր իսկ կողմից նշած անդառնալի հետևանքների և այդ հետևանքները ստենտերի հետ կապված լինելու կոնկրետ և պաշտոնական արձանագրված փաստեր:

Այսպիսով բացառապես ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակի պահանջը իրավական և բովանդակային առումով կրկին չի հիմնավորվել պատվիրատուի կողմից և այն լինելով չհիմնավորված խոչընդոտող հանգամանք, ուղիղ հանգեցնում է ոչ միայն պետական գնումների հիմնարար սկզբունքների և տրամաբանության, Գնումների մասին ՀՀ օրենքի վերը նշված դրույթների խախտմանը, այլ նաև խոչընդոտում է տնտեսական ազատ մրցակցությանն ու ուղակիորեն նպաստավոր պայման է ոլորտում մենաշնորհի համար:

Ուստի ԱԼՄԱՔՍԻՄՍ ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ-ի ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի պահանջը մնում է անփոփոխ: Այն է՝ կիրառել ՀՀ Գնումների մասին օրենքով և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման դրույթներով , Ֆինանսների նախարարի 2018թ,-ի դեկտեմբերի 6-ի N 600-Ն հրամանով, ինչպես նաև Գնումների մասին ՀՀ օրենսդրական այլ իրավական ակտերով նախատեսված

բոլոր անհրաժեշտ քայլերը՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման հրավերի 20,21,22,23,24 չափաբաժիններով նշված ապրանքների տեխնիկական բնութագրերով պահանջվող անհիմն պահանջների վերացման համար այն է՝ «Պարտադիր պայման է հանդիսանում Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» և պահանջել պատվիրատուից կատարելու փոփոխություն հրավերում՝ ապահովելով սույն գնման ընթացակարգին հնարավոր մասնակիցների հավասար և անկողնակալ մասնակցություն:»:

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ն 06.05.2020թ.-ի թիվ Ե/գ 41-2020/05 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ենք ներկայացնում «ԱԼՄԱՔՍԻՄՍ ՍՊԸ»-ի կողմից 13.04.2020թ-ի ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի վերաբերյալ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի լրացուցիչ կարծիքի մասին մեր դիրքորոշումը:

Ըստ էության, պատվիրատուն իր կողմից ներկայացրած վերջին լրացուցիչ կարծիքի մեջ ևս չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում հրավերով սահմանված այն պահանջների վերաբերյալ, որոնք դիտարկվում են սույն բողոքի շրջանակներում: Այլ կրկին ներկայացվել է կարծիք հիմնված ընդամենը օրենքի մեկնաբանության սեփական նպատակահարմարության վրա: Այնուամենայնիվ, ի լրում մեր կողմից բողոքով և կարծիքով ներկայացված հիմնական փաստարկների, անդրադառնանք նաև պատվիրատուի լրացուցիչ կարծիքում հնչեցրած որոշ հարցերի.

Նկատառում 1.

Պատվիրատուն իր լրացուցիչ կարծիքում խոսում է արդարացված բարձր ինքնարժեքի մասին. տեղեկացնենք, որ պատվիրատուի կողմից ներկայացված այն ընկերությունները, որոնք ներկայացրել են հայտեր սույն հրավերի շրջանակներում, այլ մրցույթների բանակցային գործընթացում հանդես են եկել ավելի ցածր գնային առաջարկներով բնականաբար ապրանքի ինքնարժեքից ոչ ցածր, և սա խոսում է այն մասին, որ օգտագործելով արտադրողի կամ նրա ներկայացուցչի երաշխիքային նամակի առկայության փաստը, պատվիրատուն խուսափում է բացառապես նույն արտադրողի

ապրանքը նույն տեխնիկական բնութագրով ավելի ցածր գնային առաջարկով հնարավոր այլ մասնակցից ձեռք բերելու հնարավորությունից:

Նկատառում 2.

Իր լրացուցիչ կարծիքում պատվիրատուն հղում է անում այլ բժշկական հաստատությունների կողմից բողոքի առարկա դարձած պահանջի կիրառմանը. նշենք որ ՀՀ գործող հիմնական բժշկական հաստատութունները, /այդ թվում և պատվիրատուն ընդամերը մեկ ամիս առաջ հայտարարված իր հրավերում/, նույն ապրանքների ձեռք բերման իրենց հրավերներում չեն ներառել նման պահանջ, կնքել են պայմանագրեր և ձեռք են բերել նույն արտադրողի ապրանքներ պահանջվող տեխնիկական բնութագրերով առանց անհարկի և չհիմնավորված պահանջների:

Նկատառում 3.

Նշենք, որ պատվիրատուն այդպես էլ չներկայացրեց իր կողմից հնչեցրած անդառնալի հետևանքների և այդ հետևանքները ստենտերի հետ կապված լինելու կոնկրետ և պաշտոնական արձանագրված փաստեր:

Նկատառում 4.

Պատվիրատուի կողմից պնդումը, որ արտադրողի կամ նրա ներկայացուցչի երաշխավորական նամակը կոնկրետ յուրաքանչյուր ապրանքի համար է, նշենք որ նույն ապրանքի ազատ վաճառքի պայմաններում տրված երաշխիքային նամակը գործնականում չի կարող կոնկրետ ապրանքի համար լինի, այլ բնականաբար գործում է ապրանքի ծրագրային նույնականացման, սերտիֆիկացման և համանման այլ մեխանիզմներով:

Նկատառում 5.

Ինչ վերաբերվում է և պատվիրատուի տեսակետին, որ Ալմաքսիմս ՍՊԸ-ն խոչընդոտում է պատվիրատուի անվտանգ գործունեությանը, առնվազն ունի բացատրության կարիք այն պարագայում, երբ Ալմաքսիմս ՍՊԸ-ն բողոք ներկայացնելով գործել է ՀՀ Գնումների մասին օրենսդրության համաձայն և ներկայումս պատվիրատուն հենց Ալմաքսիմս ՍՊԸ-ից է ձեռք բերում նույն ապրանքը պահանջվող տեխնիկական բնութագրով: Ընդ որում Ալմաքսիմս ՍՊԸ-ն զբաղվում է բժշկական պարագաների մասնավորապես ստենտերի ներմուծման և մեծածախ վաճառքի գործունեությամբ շուրջ 11 տարի, որի ընթացքում ՀՀ գործող բժշկական կենտրոններին պատշաճ մատակարարվել են շուրջ 11700 սրտաբանական ստենտեր և հարակից այլ բժշկական պարագաներ: Եվ այս պարագայում հարց է առաջանում ում անվտանգ և ինչ գործունեությանն է խոչնդոտում Ալմաքսիմս ՍՊԸ-ն:

Պատվիրատուն իր լրացուցիչ կարծիքում իրավական կոնկրետ հիմնավորումների փոխարեն հավակնոտ հայտարարություններ է հնչեցնում, որը անշուշտ ունի պարզաբանման կարիք:

Այսպիսով արձանագրենք ևս մեկ անգամ, որ ըստ էության պատվիրատուն իր դիրքորոշման մեջ բովանդակային և իրավական որևէ հստակեցում չի մտցրել բարձրացված հարցերի մասով, չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում հրավերով սահմանված այն պահանջների վերաբերյալ, որոնք անհիմն են և հանգեցնում է գնման գործընթացում չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը և Գնումներ մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների խախտմանը, և ուղիղ իմաստով դեմ են ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնումների հիմնարար սկզբունքներին մասնավորապես մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից:

Մասնավորապես <<ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ>> ծածկագրով գևանշման հարցման հրավերի 20, 21, 22, 23, 24 չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերում պատվիրատուի կողմից ապրանքի տեխնիկական պահանջների մանրակրկիտ և օբյեկտիվ նկարագրությունից բացի ներառված է հետևյալ պահանջը «Պարտադիր պայման է հանդիսանում Մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թողտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»:

Սույն պահանջի անհիմն և հակամրցակցային լինելու բողոքով ներկայացված մեր փաստարկներին ի պատասխան պատվիրատուն դիրքորոշմամբ չի հիմնավորել հետևյալ հարցերը.

1. Չի տրվել իրավական հիմնավորում, առ այն, որ ՀՀ Կառավարության 2017 թվականի 4 մայիսի N 526-Ն որոշման V-րդ մասի 21-րդ կետի 1-ի ա կետով սահմանված նորմի մասնավորապես «պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»-ի պահանջը հրավերի 20,21,22,23,24 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար կիրառելի է: Ըստ էության պատվիրատուն պատասխանատու լինելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջների իրավաչափության համար չի համապատասխանացրել սույն նորմի կիրառելիությունը վեճի առարկա հանդիսացող առարկաների համար և սույն դիրքորոշմամբ ևս չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում:

2. Չի տրվել իրավական և բովանդակային հիմնավոյաում գնման ենթակա ապրանքի վաճառքի ՀՀ-ում հատուկ սահմանափակումների բացակայության պայմաններում վաճառքի թույլտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակի պահանջը բացառապես արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից լինելու հանգամանքի վերաբերյալ:

Այսպիսով քանի որ բացառապես ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տփալ ապրանքի վաճառքի թողտվությունը հավաստող ավտորիզացիոն նամակի պահանջը իրավական և բովանդակային առումով կրկին չի հիմնավորվել պատվիրատուի կողմից և այն լինելով չհիմնավորված խոչընդոտող հանգամանք, ուղիղ հանգեցնում է ոչ միայն պետական գնումների հիմնարար սկզբունքների և տրամաբանության, Գնումների մասին ՀՀ օրենքի վերը նշված դրույթների խախտմանը, այլ նաև խոչընդոտում է տնտեսական ազատ մրցակցությանն ու ուղակիորեն նպաստավոր պայման է ոլորտում մենաշնորհի համար:»:

3. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.04.2020թ.-ի գրությամբ դիմել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 17.04.2020թ.-ին թիվ 09/440 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և համալսարանի գրավոր դիրքորոշումը:

Սույն թվականի ապրիլի 6-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման միջոցով բժշկական նշանակության ապրանքների և բժշկական գործիքների գնման ընթացակարգ, որի հայտերի բացումը տեղի է ունեցել ապրիլի 14-ին ժամը 09.30-ին: Բողոքի վերաբերյալ ծանուցումը ստացել ենք 15.04.2020թ.

ժամը՝ 16:05-ին: Հայտերի բացման նիստի արձանագրությունը տեղեկագրում է հրապարակվել ապրիլի 15-ին:

Ուսումնասիրելով ներկայացված բողոքը, գտնում ենք, որ այն անհիմն է՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հիմնավորումները.

Բողոքի բուն առարկան ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով գնման առարկաների տեխնիկական բնութագրերում սահմանված «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքը արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» արտահայտությունն է:

Գնման առարկաները անհրաժեշտ են «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի «Հերացի» թիվ 1 հիվանդանոցային համալիրի ինվազիվ և սրտաբանական կլինիկայում մարդու սրտի վիրահատության համար: Դեղապատ ստենտերի մասով արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից ավտորիզացիոն և երաշխիքային նամակների պահանջը սահմանելիս պատվիրատուն ապահովագրել է իրեն արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից չերաշխավորված դեղապատ ստենտերի ձեռք բերման պարտավորությունից: Սրտի վիրահատությունների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ նմանատիպ՝ արտադրողի կողմից չերաշխավորված գործարանային խոտանով ստենտի օգտագործումը հանգեցրել է անդառնալի հետևանքների: Նման դեպքում մատակարարը՝ բացի ստենտի փոխարինումից չի կրում որևէ այլ պատասխանատվություն իր կողմից մատակարարված որևէ արտադրողի օրիգինալ ստենտերի համար: Իսկ պատվիրատուն իր հերթին պետք է պատասխան տա իր կողմից տեղադրված գործարանային խոտանով ստենտի համար: Որպես պետական պատվերի շրջանակներում և վճարովի հիմունքներով մարդու սրտի վիրահատություն իրականացնող պատվիրատու, գտնում ենք որ կյանքի համար նման կարևորագույն նշանակություն ունեցող գնման առարկան պետք է ձեռք բերվի այնպիսի վաճառողներից, որոնք բացի դեղապատ ստենտերի բուն վաճառքից պարտավորվում են տվյալ դեղապատ ստենտերի արտադրողների կամ վերջինիս ներկայացուցիչների անունից կրելու նյութական և (կամ) ոչ նյութական պատասխանատվություն իրենց կողմից մատակարարված ստենտերի գործարանային խոտանի հետևանքով առաջացած խնդիրների համար:

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն փաստին, որ բողոքի առարկա հանդիսացող սահմանումը կիրառվել է միայն դեղապատ ստենտերի մասով՝ գործարանային խոտանով ստենտերի ի հայտ գալուց հետո:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

ՀՀ կառավարության կողմից թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի համաձայն՝

Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

ՀՀ կառավարության կողմից թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերության համաձայն՝

Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմված են վերոնշյալ իրավական հողումներին համապատասխան և հակառակը հիմնավորող փաստարկ բողոքաբեր անձի կողմից ներկայացված չէ: 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ և հակառակը հիմնավորող փաստարկ բողոքաբեր անձի կողմից ներկայացված չէ:

Ինչպես նշվել է դիրքորոշման սկզբում, գնման առարկա են հանդիսանում մարդու սրտի վիրահատության համար անհրաժեշտ դեղապատ ստենտերը: Կախված գնման առարկայի առնձնահատկությունից և կերևորությունից, յուրաքանչյուր Պատվիրատու ինքն է որոշում իր լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման պայմանները՝ որակը, ստանդարտը, անվտանգությունը, տերմինաբանությունը, փաթեթավորումը և այլ անհրաժեշտ չափորոշիչները, պահպանելով գնումների օրենսդրության համապատասխան պահանջները:

Դեղապատ ստենտերի արտադրողների կամ վերջինիս ներկայացուցիչների կողմից երաշխիքային նամակի տրամադրման պահանջը՝ գնումների օրենսդրության պահանջ է: Նշված պահանջի նպատակն է ապահովել Պատվիրատուին՝ ելնելով գնման առարկայի՝ տվյալ դեպքում՝ դեղապատ ստենտի առանձնահատկությունից, որակի և անվտանգության առումով չերաշխավորված ապրանքների ձեռքբերման առաջացման ռիսկից: Բողոքաբեր անձը պնդում է, որ ՀՀ կառավարության կողմից թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված դրույթը կիրառելի չէ դեղապատ ստենտերի համար՝

միաժամանակ չհիմնավորելով իր պնդումը որևէ փաստով: Հարց է առաջանում, եթե տվյալ դրույթը կիրառելի չէ մարդու սրտի դեղապատ ստենտերի համար, ապա ինչպիսի առավել կարևորության գնման առարկաների համար է կիրառելի տվյալ դրույթը:

Տվյալ դեպքում յուրաքանչյուր տեսակի դեղապատ ստենտի արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի պահանջը չի կարող խոչընդոտ կամ մրցակցության սահմանափակում հանդիսանալ հնարավոր մասնակիցների համար, քանի որ վերջիններս կամ հանդիսանում են տեխնիկական բնութագրով սահմանված դեղապատ ստենտերին համապատասխանող ստենտերի արտադրողների ներկայացուցիչներ, կամ ձեռք են բերում համապատասխան դեղապատ ստենտերը արտադրողներից առանց ներկայացուցիչ լինելու պահանջի: Ցանկացած դեղապատ ստենտի արտադրողի կողմից նրա ներկայացուցչին կամ ուղիղ վաճառք իրականացնողին հեշտությամբ տրամադրվում են թե ավտորիզցիոն և թե երաշխիքային նամակները: ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերով սահմանված է, որ պահանջվող նամակները բացի արտադրողներից կարող են տրամադրվել նաև արտադրողների ներկայացուցիչների կողմից և սահմանված չէ որևէ պահանջ այն մասին, որ արտադրողի ներկայացուցիչը պետք է հանդիսանա ՀՀ տարածքում գործունեություն իրականցնող ներկայացուցիչ: Ստացվում է, որ ցանկացած մասնակից հնարարվորություն ունի ներմուծելու ցանկացած արտադրողի համապխատասխանող դեղապատ ստենտեր ցանկացած երկրից, ստանալով պահանջվող ավտորիզացիոն և երաշխիքային նամակները տվյալ երկրում գործունեություն իրականացնող ներկայացուցչից: Սրանով իսկ բացառվել են մրացակցության անհավասար պայմանները և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, բացի այդ ապահովված են դեղապատ ստենտերի որակի, անվտանգության, կարիքին համարժեք լինելու և խնդիրներ առաջանալու դեպքում արտադրողից համապատասխան հատուցում պահանջելու պայմանները:

Որպես «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված տեխնիկական բնութագրերի ոչ խտրական և հնարավոր մասնակիցների համար մրացակցային լինելու ապացույց, կից Ձեզ ենք ներկայացնում նույն «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում տարբեր երեք կազմակերպությունների կողմից ներկայացրած՝ իրենց կողմից առաջարկվող դեղապատ

ստենդերի արտադրող կազմակերպությունների ավտորիզացիոն նամակների պատճենները:

Բողոքաբեր անձը իր բողոքի մեջ նշում է, որ պահանջվող նամակները անհասանելի են այն մասնակիցների համար, որոնք հանդիսանում են վերավաճառող: Ստիպված ենք հերքել այս պնդումը հետևյալ հիմնավորմամբ՝ եթե ցանկացած ստենդի սկզբնաղբյուրը հանդիսանում է տվյալ ստենդի արտադրողը /հակառակ դեպքում ստենդը կհանդիսանա կեղծ արտադրության/, ապա արտադրողի կողմից պահանջվող նամակները գնորդի և/կամ գնորդների պահանջի դեպքում փոխանցվում են սկզբնական ներկայացուցչից կամ վաճառողից երկրորդային և այլ վաճառողներին: Ինչպես արդեն նշել էինք՝ պահանջվող նամակները բացի արտադրողներից կարող են տրամադրվել նաև արտադրողների ներկայացուցիչների կողմից և հրավերով սահմանված չէ որևէ պահանջ այն մասին, որ արտադրողի ներկայացուցիչը պետք է հանդիսանա ՀՀ տարածքում գործունեություն իրականցնող ներկայացուցիչ:

Բողոքաբեր անձը իր բողոքի մեջ նշում է, որ սույն թվականի մարտի 16-ին համալսարանի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-9-ԵՊԲՀ» գնման ընթացակարգը, որի արդյունքում բողոքաբեր անձի հետ կնքվել է դեղապատ ստենդի մատակարարման պայմանագիր: Հայտնում ենք Ձեզ, որ նշված գնման ընթացակարգը կազմակրեպվել է սույն թվականի փետրվարի 10-ին, կից Ձեզ ենք ներկայացնում համապատասխան հիմանվորման պատճենը: Իսկ դեղապատ ստենդերի ձեռք բերման երաշխիքային նամակների պարտադիր պահանջ սահմանելու որոշումը կայացվել է սույն դիրքորոշմամբ նշված գործարանային խոտանով ստենդերի օգտագործումից հետո՝ օգտվելով ՀՀ կառավարության կողմից թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությամբ սահմանված դրույթը կիրառելու պատվիրատուի իրավունքից:

Այսպիով, ամփոփելով սույն դիրքորոշումը, հայտնում ենք Ձեզ, որ «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերը, այդ թվում նաև «Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով մներկայացնում է ապրանքը արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից, կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ» արտահայտությունը ամբողջությամբ և հստակ նկարագրում են ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով փարակերպ մեկնաբանությունը, մրցակցության հավասար պայմաններ են ապահովում հնարավոր դեղապատ ստենտերի վաճառք իրականացնող հնարավոր մասնակիցների համար, չեն հանգեցնում գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, օբյեկտիվորեն հիմնավորված են և համարժեք են այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են ձեռք բերվող ապրանքի որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա, բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների և ամենակարևորը երաշխավորում են գնորդին կեղծ, անորակ և արտադրողի կողմից չերաշխավորած անդառնալի խնդիրների առաջացման ռիսկերից:

Նկատառում՝

Ցանկացած վաճառող, որը կարող է ներկայացնել ստենտի արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրամադրված երաշխիքային նամակ, կարող է ներկայացնել նաև հրավերով սահմանված ավտորիզացիոն նամակ:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում ենք, որ <<Ալմաքսիմս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է:»:

Պատվիրատուն 04.05.2020թ.-ին թիվ 09/482 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 29.04.2020թ. ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացված լրացուցիչ կարծիքի վերաբերյալ, որպես դիրքորոշում Ձեզ ենք հայտնում հետևյալը.

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը, հանդիսանալով պատվիրատու և միաժամանակ մարդու սրտի վիրահատություններ իրականացնող, առանցքային, օրենքին չհակասող և կարիքին համարժեք է համարում արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքով ապահովագրված սրտի ստենտերի ձեռք բերման գործընթացը:

2. «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի բողոքում, բացակայում է որևէ իրավական փաստարկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 3-րդ հոդվածով տառացի և

բառացի սահմանված դրույթներին պատվիրատուի կողմից սահմանված տեխնիկական բնութագրերի անհամապատասխանության կամ հակասության վերաբերյալ:

3. Գտնում ենք, որ ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունենով՝ երաշխիքային նամակի պահանջ սահմանելու իրավունքը բխում է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի շահերից և կիրառելի է դեղապատ ստենտերի ձեռք բերման գործընթացում:

4. Համոզված ենք, որ օրիգինալ դեղապատ ստենտերի վաճառք իրականցնող ցանկացած անձի համար՝ անկախ վերջինիս ներկայացուցիչ լինելու կամ չլինելու հանգամանքի, չի կարող խոչընդոտ հանդիսանալ իր կողմից ներմուծվող ստենտերի արտադրողի, կամ վերջինիս ցանկացած ներկայացուցչի կողմից ավտորիզացիոն և երաշխիքային նամակների ներկայացման գործընթացը: Պարզապես նշված գործընթացը բարձրացնում է ապրանքի ինքնարժեքը, և վաճառքի արդյունքում, բացի զուտ շահույթ ստանալուց առաջացնում է որոշակի լրացուցիչ պատասխանատվություն: Ինքնարժեքի աճի արդյունքում, աճում է նաև վաճառքի արժեքը: Վերոնշյալով պայմանավորված, հայտնում ենք, որ համալսարանը գնման առարկայի նախահաշվային արժեքը սահմանելիս հաշվի է առել հրավերով սահմանված բոլոր պահանջները և պատրաստ է վճարելու սահմանված և բյուջեով հաստատված գումարը միայն արտադրողի կողմից երաշխավորված ստենտերի համար:

5. Արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրամադրված երաշխիքը չի կարող համարժեք լինել ուղակի վաճառք իրականացնող անձի երաշխիքին, հակառակ դեպքում գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերությունը կշարադրվեր այլ կերպ:

6. Գտնում ենք, որ հնարավոր մասնակից է հանդիսանում այն մասնակիցը, որը կբավարարի հրավերով սահմանված բոլոր պահանջներին: Բողոքաբեր անձը սույն բողոքով չի ցանկանում և /կամ/ չի կարողանում հանդիսանալ հնարավոր մասնակից բողոքի առարկա հանդիսացող ընթացակարգի շրջանակներում, և ցանկանում է պարտավորեցնել դեղապատ ստենտ ձեռք բերող պատվիրատուներին գնման առարկաների պահանջը ձևավորել այնպես, որ բավարարվեն «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի, այլ ոչ թե պատվիրատուների կարիքները:

7. «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի պնդմանը այն մասին, որ «արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից ներկայացրած նամակը դեռևս երաշխիք չի կարող լինել, որ մասնակիցը

մատակարարում է միշտ այն ապրանքախումբը, որը ձեռք է բերել երաշխիքային նամակի շրջանակներում» տեղեկացնում ենք, որ պայմանագրի կատարման փուլում երաշխիքային նամակը տրամադրվում է մատակարարված կոնկրետ ստենտերի համար:

8. Բողոքի առարկա դարձած պահանջի կարևորությունը հաշվի առնելով, տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ տարածքում սրտի վիրահատություններ իրականացնող մի շարք պատվիրատուներ՝ «Նորք Մարաշ» ԲԿ և այլ բժշկական կենտրոններ, դեղապատ ստենտերի գնման գործընթացներում որպես պարտադիր պայման են սահմանում արտադրողի կողմից ստենտերի երաշխավորված լինելը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ մերժել «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի բողոքը պարտավորեցնելով վերջինիս չխոչնդոտելու սրտի վիրահատություններ իրականացնող պատվիրատուների անվտանգ գործունեությունը:»:

Պատվիրատուն 07.05.2020թ.-ին թիվ 09/487 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ եմ ներկայացնում «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքին վերաբերվող համալսարանի լրացուցիչ դիրքորոշումը, միևնույն ժամանակ նպատակ ունենալով որոշում կայացնելու համար Ձեզ տրամադրել նոր ի հայտ եկած տեղեկատվություն, հայտնում եմ հետևյալը.

Ս.թ. փետրվարի 4-ին «Նորք Մարաշ» ԲԿ-ի կողմից հրապարակվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» գնման ընթացակարգի հրավերը, որի 59-րդ և 60-րդ չափաբաժիններորով, որպես գնման առարկա սահմանված են դեղապատ ստենտեր: Նշված ստենտերի տեխնիկական բնութագրերով սահմանված պարտադիր պայման է հանդիսանում արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից դեղապատ ստենտերի երաշխավորված լինելը: «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել նշված ընթացակարգի շրջանակներում 59-րդ և 60-րդ չափաբաժինների մասով միաժամանակ հավաստելով իր կողմից առաջարկվող ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերին համապատասխանելու մասին: Արդյունքում, «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.02.2020թ. նիստի արձանագրության թիվ 4 որոշմամբ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն հաղթող է ճանաչվել հենց 59-րդ և 60-րդ չափաբաժիններորի մասով: Այնուհետև պատվիրատուն հրապարակել է «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հետ 59-րդ և 60-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, իսկ պատվիրատուի կողմից հրապարակված կնքված պայմանգրերի մասին հայտարարությունից պարզ երևում է, որ ս.թ. մարտի 19-ին «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» գնման ընթացակարգի շրջանակներում «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հետ, 59-րդ և 60-րդ չափաբաժինների մասով կնքվել է թիվ ՆՄԲԿ-

ԲՄԱՊՁԲ-20/23-4 պայմանագիր՝ 27500000 ՀՀ դրամ գումարի չափով: Կնքված պայմանագրի մասին հայտարարության 59-րդ և 60-րդ չափաբաժինների «Պայմանագրով նախատեսված համառոտ նկարագրությունը (տեխնիկական բնութագիր)» աղյուսակից պարզ երևևում է, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրում առկա է «Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ» պարտադիր պահանջը: Կից ներկայացվում են վերոգրյալը հիմնավորող բոլոր անհրաժեշտ հրապարակային փաստաթղթերը:

Ցանցկանում եմ Ձեզ տեղեկացնել որ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքի առարկա հանդիսացող գնման ընթացակարգը «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակվել է ս.թ. ապրիլի 6-ին, այսինքն «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» գնման ընթացակարգի շրջանակներում, ս.թ. մարտի 19-ին «Նորք Մարաշ» ԲԿ և «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի միջև պայմանագրի կնքումից ուշ:

Ամփոփելով վերոնշյալ արձանագրված տեղեկատվությունը, արձանագրում ենք նաև հետևյալը.

Հանդիսանալով «Նորք Մարաշ» ԲԿ-ի կողմից 04.02.2020թ. հրապարակված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-20/23» գնման ընթացակարգի հնարավոր մասնակից՝

1. «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն չի բողոքարկել գնման ընթացակարգը, մասնավորապես՝ «Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ» պարտադիր պահանջը,

2. Մասնակցության հայտ է ներկայացրել գնման ընթացակարգի շրջանակներում 59-րդ և 60-րդ չափաբաժիններով սահմանված դեղապատ ստենտերի մասով, հաշվի առնելով դեղապատ ստենտերի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխավորված լինելու պարտադիր պահանջը,

3. Հավաստել է իր կողմից առաջարկվող ապրանքի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին,

4. Ընտրված մասնակից է ճանաչվել ընթացակարգի 59-րդ և 60-րդ չափաբաժիններով,

5. Ընդունել է պայմանագիր կլնքելու առաջարկը,

6. Ս.թ. մարտի 19-ին «Նորք Մարաշ» ԲԿ-ի հետ կնքել է դեղապատ ստենտերի մատակարարման պայմանագիր, որի պարտադիր պայման է հանդիսանում դեղապատ ստենտերի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխավորված լինելը, և

արդյունքում ստանձնել է արտադրողի կողմից երաշխավորված դեղապատ ստենտերի մատակարարման պարտավորությունը,

7. Ս.թ. ապրիլի 16-ին բողոքարկել է «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգը, մասնավորապես դեղապատ ստենտերի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխավորված լինելու պահանջը:

Կարող ենք արձանագրել նաև այն փաստը, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ն, հանդիսացել է «Երևանի Մխիթար հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հնարավոր մասնակից՝ հրավերի բոլոր պահանջների նկատմամբ, սակայն մասնակցության հայտ ներկայացնելու փոխարեն, որոշել է բողոքարկել պատվիրատուի կողմից հրապարակված այն պահանջը, որի կատարման համար ստանձնել է պարտավորություն մեկ այլ պատվիրատուի նկատմամբ:

Վերոնշյալ անհերքելի և արձանագրված փաստերին ծանոթանալով, առաջանում են որոշակի հարցեր, որոնց հնարավոր պատասխանների շուրջ դեռևս չէինք ցանկանա տալ որևէ մեկնաբանություն:

Խնդրում ենք Ձեզ որոշում կայացնելու նպատակով հաշվի առնել սույն դիրքորոշմամբ ներկայացված անհերքելի փաստերը, ինչը մեր համոզմամբ կհանդիսանա «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի մերժման հիմքերից մեկը:»:

Պատվիրատուն 07.05.2020թ.-ին թիվ 09/488 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի լրումն «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքին վերաբերվող համալսարանի լրացուցիչ դիրքորոշման, Ձեզ ենք ներկայացնում ֆինանսների նախարարության նախարարի առաջին տեղակալ Կարեն Բրուտյանի գրության պատճենը և հայտնում ենք հետևյալը.

Ս.թ. ապրիլի 23-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը գրավոր դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրելով մեկնաբանել ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա/ պարբերության որոշ դրույթներ, մասնավորապես հրավերում պայմանագրի կատարման փուլում ապրանքը արտադրողից կամ վերջինիս ներկայացուցի երաշխիքային նամակի պահանջի դեղապատ ստենտերի նկատմամբ կիրառելիության վերաբերյալ:

Խնդրում ենք Ձեզ գործի ուսումնասիրության փուլում հաշվի առնել ՀՀ ֆինանսների նախարարության պատասխան գրությունը.»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/51 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների և գործիքների ձեռքբերման նպատակով 06.04.2020թ.-ին հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի բացման նիստի օր է սահմանվել 14.04.2020թ.-ին:

Ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 20-24-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

«…Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»:

www.gnumner.am կայքում առկա է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին 09.04.2020թ.-ին հրապարակված թվով 1 հայտարարություն (այսուհետ նաև՝ Հայտարարություն):

Հայտարարությունում առկա տեղեկատվության համաձայն՝ Պատվիրատուն իր պատասխանում նշել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակված ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաները հանդիսանում են մարդու սրտի վիրահատության համար անհրաժեշտ դեղապատ ստենտեր: «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման

առարկաների տեխնիկական բնութագրերին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ և հակառակը հիմնավորող փաստարկ պարզաբանում պահանջող մասնակցի կողմից ներկայացված չէ: Կախված գնման առարկայի առնձնահատկությունից և կերևորությունից, յուրաքանչյուր Պատվիրատու ինքն է որոշում իր լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման պայմանները՝ որակը, ստանդարտը, անվտանգությունը, տերմինաբանությունը, փաթեթավորումը և այլ անհրաժեշտ չափորոշիչները, պահպանելով գնումների օրենսդրության համապատասխան պահանջները:

Դեղապատ ստենտերի արտադրողների կամ վերջինիս ներկայացուցիչների կողմից երաշխիքային նամակի տրամադրման պահանջը՝ գնումների օրենսդրության պահանջ է: Նշված պահանջի նպատակն է ապահովել Պատվիրատուին՝ ելնելով գնման առարկայի տփալ դեպքում դեղապատ ստենտի առանձնահատկությունից, որակի և անվտանգության առումով չերաշխավորված ապրանքների ձեռքբերման առաջացման ռիսկից: Պատվիրատուների մոտ արձանագրվում են դեպքեր, երբ վաճառողների կողմից մատակարարված և տվյալ ստենտերի արտադրողների կողմից չերաշխավորված ստենտերի կիրառման ընթացքում առաջանում են անդառնալի դեպքեր կապված ստենտի որակի և անվտանգության հետ: Նման դեպքերում պատվիրատուները զրկվում են իրենց հետագա շահերը պաշտպանելու հնարավորությունից, իսկ դեղապատ ստենտերի արտադրողների կողմից չեն արձանագրվում անորակ և վտանգավոր ստենտի առկայության փաստը և այդ ուղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու պահանջը:

Տվյալ դեպքում յուրաքանչյուր տեսակի դեղապատ ստենտի արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի պահանջը չի կարող խոչընդոտ կամ մրցակցության սահմանափակում հանդիսանալ հնարավոր մասնակիցների համար, քանի որ վերջիններս կամ հանդիսանում են տեխնիկական բնութագրով սահմանված դեղապատ ստենտերին համապատասխանող ստենտերի արտադրողների ներկայացուցիչներ, կամ ձեռք են բերում համապատասխան դեղապատ ստենտերը արտադրողներից առանց ներկայացուցիչ լինելու պահանջի: Ցանկացած դեղապատ ստենտի արտադրողի կողմից նրա ներկայացուցչին կամ ուղիղ վաճառք իրականացնողին հեշտությամբ տրամադրվում են թե ավտորիզցիոն և թե երաշխիքային նամակները: «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերով սահմանված է, որ պահանջվող նամակները բացի արտադրողներից կարող

են տրամադրվել նաև արտադրողների ներկայացուցիչների կողմից: Սրանով իսկ բացառվել են մրացակցության անհավասար պայմանները և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, բացի այդ ապահովված են դեղապատ ստենտերի որակի, անվտանգության, կարիքին համարժեք լինելու և խնդիրներ առաջանալու դեպքում արտադրողից համապատասխան հատուցում պահանջելու պայմանները:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրված պարզաբանման համաձայն՝ ... ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը ապրանքների գնման դեպքում հայտով ներկայացնում է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ ապրանքի ամբողջական նկարագիր):

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Իսկ եթե գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապա գտնում ենք, որ դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան

հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բժշկական նշանակության ապրանքների և գործիքների ձեռքբերման նպատակով 06.04.2020թ.-ին հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 20-24-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

«...Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»:

www.gnumner.am կայքում առկա է Ընթացակարգի հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին 09.04.2020թ.-ին հրապարակվել է թվով 1

հայտարարություն, որի համաձայն՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հրապարակված ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաները հանդիսանում են մարդու սրտի վիրահատության համար անհրաժեշտ դեղապատ ստենտեր: «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերին բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ և հակառակը հիմնավորող փաստարկ պարզաբանում պահանջող մասնակցի կողմից ներկայացված չէ: Կախված գնման առարկայի առնձնահատկությունից և կերևորությունից, յուրաքանչյուր Պատվիրատու ինքն է որոշում իր լիազորությունների կատարման համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման պայմանները՝ որակը, ստանդարտը, անվտանգությունը, տերմինաբանությունը, փաթեթավորումը և այլ անհրաժեշտ չափորոշիչները, պահպանելով գնումների օրենսդրության համապատասխան պահանջները:

Դեղապատ ստենտերի արտադրողների կամ վերջինիս ներկայացուցիչների կողմից երաշխիքային նամակի տրամադրման պահանջը՝ գնումների օրենսդրության պահանջ է: Նշված պահանջի նպատակն է ապահովել Պատվիրատուին՝ ելնելով գնման առարկայի տփալ դեպքում դեղապատ ստենտի առանձնահատկությունից, որակի և անվտանգության առումով չերաշխավորված ապրանքների ձեռքբերման առաջացման ռիսկից: Պատվիրատուների մոտ արձանագրվում են դեպքեր, երբ վաճառողների կողմից մատակարարված և տվյալ ստենտերի արտադրողների կողմից չերաշխավորված ստենտերի կիրառման ընթացքում առաջանում են անդառնալի դեպքեր կապված ստենտի որակի և անվտանգության հետ: Նման դեպքերում պատվիրատուները զրկվում են իրենց հետագա շահերը պաշտպանելու հնարավորությունից, իսկ դեղապատ ստենտերի արտադրողների կողմից չեն արձանագրվում անորակ և վտանգավոր ստենտի առկայության փաստը և այդ ուղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու պահանջը:

Տվյալ դեպքում յուրաքանչյուր տեսակի դեղապատ ստենտի արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի կողմից երաշխիքային նամակի պահանջը չի կարող խոչընդոտ կամ մրցակցության սահմանափակում հանդիսանալ հնարավոր մասնակիցների համար, քանի որ վերջիններս կամ հանդիսանում են տեխնիկական բնութագրով սահմանված դեղապատ ստենտերին համապատասխանող ստենտերի արտադրողների ներկայացուցիչներ, կամ ձեռք են բերում համապատասխան դեղապատ ստենտերը

արտադրողներից առանց ներկայացուցիչ լինելու պահանջի: Ցանկացած դեղապատ ստենտի արտադրողի կողմից նրա ներկայացուցչին կամ ուղիղ վաճառք իրականացնողին հեշտությամբ տրամադրվում են թե ավտորիզցիոն և թե երաշխիքային նամակները: «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժիններով սահմանված գնման առարկաների տեխնիկական բնութագրերով սահմանված է, որ պահանջվող նամակները բացի արտադրողներից կարող են տրամադրվել նաև արտադրողների ներկայացուցիչների կողմից: Սրանով իսկ բացառվել են մրցակցության անհավասար պայմանները և մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը, բացի այդ ապահովված են դեղապատ ստենտերի որակի, անվտանգության, կարիքին համարժեք լինելու և խնդիրներ առաջանալու դեպքում արտադրողից համապատասխան հատուցում պահանջելու պայմանները:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին տրված պարզաբանման համաձայն՝ … ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը ապրանքների գնման դեպքում հայտով ներկայացնում է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ ապրանքի ամբողջական նկարագիր):

Վերոգրյալով պայմանավորված հայտնում ենք, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը պետք է համապատասխանեն գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին: Իսկ եթե գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապա գտնում ենք, որ դրանք կարող են լինել մեկից ավելին (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում), եթե մասնակցի կողմից առաջարկվող տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված

ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ապրանքների գնման դեպքում հրավերով սահմանվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Պատվիրատուն հրավերով սահմանում է պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի, պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով 20-24-րդ չափաբաժինների համար սահմանված՝ *«Պարտադիր պայման է հանդիսանում՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»* պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված պահանջներին, քանի որ մասնակիցը, հրավերով սահմանված դեպքում, հայտով՝ թիվ 1.1 հավելվածով ներկայացնում է միայն իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը, իսկ այլ փաստաթղթեր, մասնավորապես՝ ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակի ներկայացման պարտականություն Մասնակիցը հայտով՝ թիվ 1.1 հավելվածով չի կրում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները հիմնավոր են, իսկ գնման ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների մասով սահմանված՝ *«Պարտադիր պայման է հանդիսանում՝* ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքի արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ****, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»* պահանջը հակասում է Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ և 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված

պահանջներին՝ որպիսի պայմաններում խախտվում են Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ալմաքսիմս» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/51 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2020/16-13-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընթացակարգի հրավերի 20-24-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում կատարել փոփոխություն՝ համապատասխանեցնելով Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներին, այն է՝ *«Մասնակիցը պայմանագրի կատարման փուլում ներկայացնում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից տվյալ ապրանքի վաճառքի թույլտվությունը հավաստող՝ ավտորիզացիոն նամակ, և ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակ»*:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**